



The European Union’s “Support to Migration Policy Development and Relevant Capacity Building in Armenia” Programme

Եվրամիության «Աջակցություն Հայաստանում միգրացիոն քաղաքականության և համապատասխան կարողությունների հզորացմանը» ծրագիր

Policy Brief Համառոտագիր



This project is funded by the European Union
Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրամիության կողմից



ԲՐԻՏԻՇ ԲԱՌԻՍԻԼ



International Center for Human Development
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն



This project is implemented by
Ծրագիրն իրականացնում են՝

Migration Agency of the Ministry of Territorial Administration of RA
ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալություն

Միգրացիոն տեղեկատվության կառավարման

համակարգի բարեփոխումները

Համառոտագիր



Մարդկային
գարգացման
միջազգային
կենտրոն

Կառավարման երկվորյակները

Անվիճելի է, որ միգրացիոն քաղաքականության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է միգրացիոն միտումները նկարագրող պատշաճ ու հանգամանակի վիճակագրության առկայությամբ: Միաժամանակ, միգրացիայի կարգավորման ընթացակարգերի արդյունավետությունը և ծառայությունների մատուցման որակը պայմանավորված են միգրացիոն տեղեկատվության հոսքերի և հաշվառման գործառնությունների պատշաճ կազմակերպմամբ:

Միգրացիոն հոսքերի հաշվառման ընթացիկ համակարգը

Ի միգրացիոն հոսքերի վարչական հաշվառումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է մի շարք գերատեսչությունների կողմից՝ իրենց գործառնությունների շրջանակներում: Այսպես, ՀՀ Կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) Սահմանային կետերում տեղեկատվության հավաքագրման համակարգը (ՍԿՏՀ) ապահովում է հիմնականում իմիգրացիայի վերաբերյալ տվյալների հավաքագրումը, միաժամանակ գրանցում երկրից դուրս եկողներին: ՀՀ սահմանային կետերում և ՀՀ տարածքում օտարերկրացիներին վիզաների տրամադրման, դրանց ժամկետների երկարաձգման, ինչպես նաև կացության թույլտվությունների վերաբերյալ փաստաթղթերի ընդունման գործառնություններով պայմանավորված տվյալների հավաքագրումն իրականացնում է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ Ոստիկանությունը: Արտերկրում օտարերկրացիներին Հայաստան մուտքի վիզաների տրամադրման վերաբերյալ տվյալները մասնակիորեն հավաքագրում է ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը՝ դիվանագիտական առաքելությունների ու հյուպատոսական հիմնարկների միջոցով: Օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ քաղաքացիություն տրամադրելու, ինչպես նաև ՀՀ-ում կացության կարգավիճակի տրամադրման վերաբերյալ տեղեկությունները տնօրինում է ՀՀ Ոստիկանությունը: ՀՀ տարածքում անցանկալի համարվող օտարերկրացիների տվյալների բանկը տնօրինում է ԱԱԾ-ն: ՀՀ-ում ապաստան հայցողների և ՀՀ-ում ապաստան ստացած փախստականների կենտրոնացված հաշվառումը և տեղեկատվական բանկը, արտերկրում առանց թույլտվության գտնվող անձանց հետընդունման գործընթացի վերաբերյալ տվյալները տնօրինում է միգրացիոն գործակալությունը և այլն:

Հայաստանում ներկայում գործող Եմիգրացիոն հոսքերի վիճակագրության հիմնական աղբյուրը ՀՀ Ոստիկանության անձնագրային ծառայությունների տարածքային ստորաբաժանումներն են, որոնք իրականացնում են բնակչության տվյալների հաշվառումն ու հաշվառումից հանելու գործառնությունները: Այնուամենայնիվ, վերջինս չի արտացոլում բնակչության տեղաշարժի իրական ծավալը, քանի որ բնակչության զգալի մասը դուրս է գալիս հանրապետության տարածքից և համեմատաբար երկար ժամկետով բնակություն է հաստատում արտասահմանում՝ առանց գրանցումից դուրս գալու:

Եվրոպական չափանիշները

Տրամաբանորեն, միգրացիոն վիճակագրությունը պետք է համապատասխանի Հայաստանում վիճակագրությանը ներկայացվող պահանջներին: Սակայն այն պետք է համապատասխանի նաև անկողմնակալության, հուսալիության, օբյեկտիվության, գիտականորեն հիմնավորվածության, ծախսարդյունավետության և վիճակագրական գաղտնիության միջազգայնորեն ընդունված չափորոշիչներին:

Եվրոպական չափանիշներին համապատասխան և համադրելի միգրացիոն վիճակագրության ձևավորման համար անհրաժեշտ է ոչ միայն ներդնել վիճակագրական տվյալների հավաքման հուսալի համակարգ, այլև միասնականացնել միգրացիայի ոլորտում հասկացությունների սահմանումները՝ դրանք հնարավորինս համապատասխանեցնելով համաեվրոպական օրենսդրության (acquis) շրջանակներում սահմանված հասկացություններին: Օրինակ՝ Հայաստանում արդեն իսկ օրենսդրորեն սահմանված են ապաստանի, կամավոր վերադարձի, փախստականի, ընտանիքի անդամների, քաղաքացիության և այլ հասկացությունները: Այդուհանդերձ, միգրացիայի հիմնական հասկացությունները, այդ թվում՝ իմիգրացիան և Եմիգրացիան սահմանված չեն: Հայաստանում օտարերկրացիների վերաբերյալ անհատական տվյալների պաշտպանությունը ամրագրված է օրենսդրորեն: Այդուհանդերձ, օտարերկրացիների հաշվառման միասնական ռեգիստրի բացակայության պարագայում, առանձին տվյալների բանկերից օգտվելու իրավունք ունեցող մարմինների ներքին շրջանակը սահմանափակում է միգրացիայի կարգավորման ընթացակարգերի արդյունավետությունը՝ մեծացնում է առանձին վարչական վարույթների տևողությունը:

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

Տեղեկատվական գլուխկոտրուկ

Ընդհանուր առմամբ, չնայած վերը նշված գերատեսչություններում օտարերկրացիների մուտքի/ելքի վերաբերյալ առանձին տվյալների առկայությանը, այդ տվյալների հիման վրա միասնական վիճակագրական վերլուծություն չի իրականացվում: Հայաստան ժամանող և հանրապետությունից մեկնող անձանց ներկայում գործող հաշվառումը ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությանը հնարավորություն չի տալիս գնահատելու միգրացիոն շարժի կառուցվածքն ու միտումները: Բացակայում են ՀՀ տարածքում գտնվող օտարերկրացիների միգրացիոն կարգավիճակի փոփոխության մասին տեղեկությունները, այդ թվում՝ համապատասխան թույլտվությունների ուժը կորցրած լինելու հանգամանքը, ՀՀ-ում սովորող օտարերկրացիների գրանցումը և այլն: ԱՎԾ-ի համար անմիջականորեն մատչելի չեն, մասնավորապես, ԱԱԾ-ի ՍԿՏՀ և ՀՀ Ոստիկանության տվյալների շտեմարանները: Չնայած ՀՀ Կառավարությունը նախաձեռնել է քայլեր ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու և դրա շահագործումը կանոնակարգելու ուղղությամբ, այնուամենայնիվ միգրացիայի վարչական հաշվառման համակարգը արդյունավետ չէ, վերը նշված տվյալների գերատեսչական շտեմարանները ֆիզիկապես փոխկապակցված չեն, բավարար կերպով չեն ապահովում միասնական կերպով ներդաշնակեցված տվյալների կանոնավոր, ժամանակին և արագ տրամադրումը և չեն ընձեռում տվյալների ամբողջական վերլուծություն իրականացնելու հնարավորություն: Ավելին, առանձին տեղեկատվական բազաների փոխկապակցված չլինելու հանգամանքը, ինչպես նաև ՀՀ տարածքում օտարերկրացիների տեղաշարժի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության բացակայությունը, մարտահրավերներ է ստեղծում ՀՀ ազգային անվտանգության համար:

Երեք խնձոր

Հայաստանում միգրացիոն քաղաքականության մշակման, իրականացման և վերահսկողության, ինչպես նաև միգրացիայի կարգավորման ընթացակարգերի արդյունավետությունը մեծացնելու, միգրացիոն միտումները նկարագրող վիճակագրությունն ամբողջականացնելու նպատակով անհրաժեշտ են երեք հիմնական քայլեր:

Նախ, անհրաժեշտ է ապահովել միգրացիայի վերաբերյալ տվյալների հավաքագրման և վիճակագրության վարման համապատասխանությունը ԵՄ չափանիշներին: Մասնավորապես, հարկ է սահմանել միգրացիայի ոլորտում հասկացությունները, ինչպես նաև միգրացիոն վիճակագրական տեղեկատվությանը և անհատական տվյալների ավտոմատացված վերամշակման առնչությամբ անհատների պաշտպանությանը ներկայացվող միասնական պահանջները՝ ԵՄ օրենսդրության դրույթներին համապատասխան: Հարկ է ստորագրել ներքին և միջազգային տեղաշարժի վերաբերյալ տեղեկությունների փոխանակման առանձին երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր, ներդնել անհատական տվյալների բիոմետրիկ փաստաթղթերը, ինչպես նաև պատրաստել միգրացիոն վիճակագրության ազգային զեկույցներ ու տարեգրքեր:

Երկրորդ, անհրաժեշտ է ստեղծել միգրացիայի տվյալների կառավարման միասնական էլեկտրոնային համակարգ՝ միգրացիայի վիճակագրության ցուցանիշների հիման վրա տվյալների հավաքագրման, վերլուծության և փոխանակման մեթոդաբանության և ծրագրային ապահովման մշակման, միգրացիայի վերաբերյալ էլեկտրոնային շտեմարաններ տվյալների մուտքագրման, փոխանակման, համատեղ օգտագործման և տվյալների ծածկագրման ու գաղտնագրման ավտոմատացված ընթացակարգերի ներդրման, տվյալների շտեմարանները վարելու և առանձին տվյալներից օգտվելու պատասխանատու մարմինների իրավասության շրջանակն ու սահմանափակ հասանելիության ռեժիմը սահմանելու, տվյալների միջգերատեսչական փոխանակման կարգի մշակման, շտեմարանները վարելու և դրանց տվյալներից օգտվելու նկատմամբ պատշաճ վերահսկողության սահմանելու միջոցով:

Ի վերջո, անհրաժեշտ է բարելավել միգրացիայի կառավարման գործընթացում ներգրավված մարմինների կարողությունները. սահմանել տվյալների կառավարման գործընթացը համակարգող պետական կառավարման մարմնի լիազորությունները, առանձին պետական մարմիններին վերապահել ծածկագրման ու գաղտնագրման իրավասություններ, իսկ այդ մարմինների աշխատակազմերի գաղտնագրող (ծածկագրող) և սահմանի վրա աշխատող ծառայողների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ:

Համառոտագիրը մշակվել է «Աջակցություն Հայաստանում միգրացիոն քաղաքականության մշակմանն ու համապատասխան կարողությունների ձևավորմանը» ծրագրի շրջանակներում 2009թ-ի սեպտեմբերի 18-ին կայացած կլոր սեղանի մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

